

Կամավորների միջազգային օր, 5 դեկտեմբերի 2008թ.

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կառավարիչ Քեմալ Դերվիշի ելույթը

Աղքատության նվազեցումը մնում է առաջնային խնդիր մեր աշխատանքում, որը ուղղված է մարդկային զարգացմանը և Հազարամյակի զարգացման նպատակներին: Այն ժամանակ, երբ ընթացիկ ֆինանսական անկումն ազդում է և՛ գացած, և՛ զարգացող երկրների վրա, աղքատ և առավել խոցելի խավն է, որի վրա անհամաչափորեն է ազդում գլոբալ տնտեսական ու ֆինանսական, ինչպես նաև երկարատև պարենային և վառելիքային ճգնաժամը:

ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը համատեղ աշխատում է ՄԱԿ-ի Կամավորների ծրագրի հետ՝ կամավորության միջոցով խաղաղությանը և մարդկային զարգացմանը հասնելու համար: ՄԱԿ-ի Կամավորների ծրագիրը, որպես ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ընտանիքի ինտեգրալ մասնիկ, իր շուրջ 7500 կամավորների հետ միասին նպաստում է զարգացման ծրագրերի հզորացմանը, ներգրավմանը և լայն հիմքերի վրա դրված սեփականության իրավունքի իրականացմանը:

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի գործընկերները ՄԱԿ-ի Կամավորների ծրագրի հետ բարելավում են հետադետային և հետկոնֆլիկտային միջավայրը՝ վերակառուցելով համայնքները և ինֆրակառուցվածքները, ներգրավելով ռիսկային խավերին, կանանց ու երիտասարդությանը և զարգացնելով նրանց կարողությունները:

Այս համագործակցության կարևոր խնդիրներից է համայն աշխարհում ժողովրդավարական կառավարմանը նպաստելը: Ավելի քան 1500 ՄԱԿ-ի կամավորներ ապահովում են մասնագետներով, որոնք ցուցաբերում են տեխնիկական աջակցություն կառավարություններին և այլ շահառուներին՝ ազգային և տեղական մակարդակներում: Աշխատելով տեղական իշխանությունների և համայնքների հետ՝ ՄԱԿ-ի կամավորները հավաստիացնում են,

որ կառավարումը պետք է հիմնվի մարդու իրավունքների սկզբունքների, արդարության և գենդերային հավասարության վրա:

ՄԱԿ-ի Մշտական համակարգողները և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի մշտական ներկայացուցիչներն ամբողջ աշխարհով մեկ ընդունում են ՄԱԿ-ի Կամավորների նվիրվածությունը և ներդրումը խաղաղության և զարգացման գործում: Կամավորները հնարավորություն են տալիս համայնքներին ստեղծելու զարգացման մարտահրավերների իրենց իսկ լուծումները՝ համագործակցելով կառավարությունների զարգացման ծրագրերի հետ: Նրանք նպաստում են համագործակցությանը, որը զարգացնում է մարդկանց և հաստատությունների կարողությունները, ուժեղացնում է հասարակական համախմբվածությունը և համերաշխությունը, և ներառում է բոլոր շահառուներին՝ խթանելու համար առավել բարօրություն:

Նրանց աշխատանքը ոգեշնչում է մեզ բոլորիս և այս օրով ես տուրք եմ տալիս նրանց հանձնառությանը, քրտնաջան աշխատանքին և առաքելության զգացողությանը:

Թարգմանեցին՝ Օֆելյա Կարապետյանը
Վարդուհի Սեմերջյանը